ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
Որոշում N 1/306Ա

28/04/2006

«ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման համաձայնագրի» օրինակելի ձևը հաստատելու վերաբերյալ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածը՝

որոշումեմ՝

1.Հաստատել «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման համաձայնագրի» օրինակելի ձևը՝ ըստ Հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝ **Տիգրան Սարգսյան**

Հավելված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԹԻՎ ---------

ք. Երևան «----» «----------» 200---թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ Կենտրոնական բանկ), գործելով համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ի դեմս Կենտրոնական բանկի նախագահ Տ. Սարգսյանի, մի կողմից, և ---------- բանկը (այսուհետ՝ Բանկ), գործելով համաձայն Բանկի կանոնադրության, ի դեմս գործադիր տնօրեն (վարչության նախագահ)՝ ---------- մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Հոդված 1. Համաձայնագրի առարկան

Կողմերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, այլ իրավական ակտերի և սույն համաձայնագրի շրջանակներում երկրորդային շուկայում կնքում են Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի առքի կամ վաճառքի գործարքներ:

Հոդված 2. Ընդհանուր դրույթներ

2.1 Սույն համաձայնագրի իմաստով՝

- Արժեթուղթ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կամ Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր.
- Գնորդ՝ գործարքի կատարման օրը սեփականության իրավունքով Արժեթղթեր ձեռք բերող.
- Վաճառող՝ գործարքի կատարման օրը Արժեթղթեր օտարող.
- Հայտ՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Արժեթղթերի առքի կամ վաճառքի գործարք կնքելու առաջարկ (հավելված 1 կամ 2).
- Գործարքի հաստատում (մասնակի բավարարմամբ հաստատում)՝ Կենտրոնական բանկի կողմից Արժեթղթերի առքի կամ վաճառքի գործարք կնքելու հաստատում կամ մասնակի բավարարմամբ հաստատում (հավելված 3 կամ 4).

- Հայտի մերժում՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված հայտը Կենտրոնական բանկի կողմից մերժելու մասին ծանուցում (հավելված 5).
- Գործարքի կնքման օր՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկ գնման կամ վաճառքի հայտի ներկայացման և Կենտրոնական բանկի կողմից համապատասխան հայտի հաստատման օր.
- Գործարքի կատարման օր՝ Կենտրոնական բանկի կողմից դեպո կամ թղթակցային հաշիվներին գործարքին համապատասխան միջոցների փոխանցման օր .
- Տոկոսադրույք՝ Կենտրոնական բանկի կողմից հայտարարվող տոկոսադրույք.
- Պահառու՝ Արժեթղթերի հաշվեգրումն իրականացնող ենթակառուցվածք: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և Կենտրոնական բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի Պահառուի գործառույթներն իրականացնում է Կենտրոնական բանկը՝ ապահովելով տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկումը:
- Դեպո հաշիվ՝ Պահառուի կողմից վարվող Արժեթղթերի հաշվառման հատուկ հաշիվ.
- Գործառնական օր՝ Կենտրոնական բանկի աշխատանքային օրվա ժամը 10:00-ից մինչև ժամը 17:30-ը.
- Աշխատանքային օր՝ օրենքով սահմանված տոնի կամ հիշատակի ոչ աշխատանքային օրերից և շաբաթ կամ կիրակի օրերից բացի ցանկացած օրացուցային օր:

Հոդված 3. Արժեթղթերի առքի և վաճառքի գործառնությունների հաշվարկների իրականացման կարգը

3.1 Բանկը Կենտրոնական բանկ հայտ է ներկայացնում՝ հիմք ընդունելով Կենտրոնական բանկի կողմից հայտարարված տոկոսադրույքը:

3.2 Բանկը Կենտրոնական բանկին հայտ է ներկայացնում տվյալ գործառնական օրվա ժամը 10.00-12:00-ը:

3.3 Գործառնությունների հաշվառումն իրականացվում է Բանկի ---------- դեպո հաշվի միջոցով:

3.4 Գործարքների հաշվարկները կատարվում են բացառապես առաքում՝ վճարման դիմաց սկզբունքով:

3.5 Հայտը ներկայացվում է «Սի Բի Էյ նեթ» համակարգչային ցանցի միջոցով՝ սահմանված արարողակարգերով: Եթե Բանկը տարբեր տեսակի վթարների հետևանքով (կապի խզում, մասնակցի հսկողության ներքո գործող տեխնիկածրագրային ապահովման անսարքություն և այլն) «Սի Բի Էյ նեթ» համակարգչային ցանցի միջոցով հայտը ուղարկելու հնարավորություն չունի, ապա այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկի կողմից լիազորված

աշխատակիցներին և հայտը ներկայացվում է թղթային եղանակով (երկու օրինակից):

3.6 Կենտրոնական բանկը ներկայացված հայտի հաստատման (հեռախոսով կամ «Սի Բի Էյ նեթ» համակարգչային ցանցի միջոցով) կամ մերժման («Սի Բի Էյ նեթ» համակարգչային ցանցի միջոցով) վերաբերյալ Բանկին տեղեկացնում է մինչև տվյալ գործառնական օրվա ժամը 14:30-ը:

3.7 Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում միակողմանիորեն մերժել Բանկի կողմից ներկայացված հայտը կամ այն բավարարել մասնակիորեն (հայտի մասնակի բավարարմամբ հաստատում):

3.8 Բանկը մինչև տվյալ գործառնական օրվա ժամը 14:30-ը չի կարող իր կողմից Կենտրոնական բանկ առաքված հայտը հետ կանչել:

3.9 Հայտը հաստատելու (մասնակի բավարարմամբ հաստատելու) կամ մերժելու դեպքում Կենտրոնական բանկը պատշաճ կերպով (հաստատված արարողակարգերով սահմանված կարգով) ծանուցում է Բանկին:

3.10 Եթե Բանկը մինչև հայտի առաքման գործառնական օրվա ժամը 16:30-ը Կենտրոնական բանկից սահմանված կարգով տեղեկանում է գործարքի հաստատման վերաբերյալ, ապա գործարքը համարվում է կնքված, և Կողմերը ստանձնում են սույն համաձայնագրով սահմանված իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կրում են նախատեսված պատասխանատվությունը:

3.11 Դրամական փոխանցումներն ու արժեթղթերի հաշվեգրումները կատարվում են մինչև գործարքի կնքման գործառնական օրվա ավարտը,:

3.12 Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում Կենտրոնական բանկում գտնվող Բանկի N---------- թղթակցային հաշվից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձել սույն համաձայնագրի հոդված 5-ով նախատեսված տուժանքի գումարները:

Հոդված 4. Կողմերի պարտավորությունները

4.1 Կողմերը պարտավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում ապահովել կատարվող գործառնությունների գաղտնիությունը:

4.2 Կողմերը պարտավորվում են գործարքի իրականացման համար նախատեսված դրամական միջոցները կամ արժեթղթերը համաձայնագրով սահմանված ժամկետներում ապահովել իրենց համապատասխան հաշիվներին:

Հոդված 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Այն դեպքում, երբ Բանկը հանդես է գալիս որպես վաճառող, գործարքի կատարման օրվա դրությամբ իր դեպո հաշվին գործարքին համապատասխան

Արժեթղթեր չունենալու դեպքում վճարում է տուժանք՝ Կենտրոնական բանկի կողմից բավարարված գործարքի գնի 1%-ի չափով, իսկ հայտը և հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

5.2 Այն դեպքում, երբ Բանկը հանդես է գալիս որպես գնորդ, գործարքի կատարման օրվա դրությամբ իր թղթակցային հաշվին գործարքին համապատասխան դրամական միջոցներ չունենալու դեպքում վճարում է տուժանք՝ Կենտրոնական բանկի կողմից բավարարված գործարքի գնի 1%-ի չափով, իսկ հայտը և հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

5.3 Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկը հանդես է գալիս որպես գնորդ, գործարքի կատարման օրվա դրությամբ դրամական փոխանցումները չկատարելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում դրամական պարտավորության կամ դրա համապատասխան մասի նկատմամբ վճարում է տուժանք՝ Կենտրոնական բանկի կողմից բավարարված գործարքի գնի 1%-ի չափով, իսկ հայտը և հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

5.4 Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկը հանդես է գալիս որպես վաճառող, գործարքի կատարման օրվա դրությամբ Կենտրոնական բանկի կողմից գործարքին համապատասխան Արժեթղթերը Գնորդի «դեպո» հաշվին չհաշվեգրելու դեպքում Կենտրոնական բանկը վճարում է տուժանք՝ Կենտրոնական բանկի կողմից բավարարված գործարքի գնի 1%-չափով, իսկ հայտը և հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

5.5 Կողմերը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն համաձայնագրով նախատեսված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները երրորդ անձանց տրամադրելու համար, բացառությամբ «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի:

Հոդված 6. Վեճերի լուծման կարգը

6.1 Սույն համաձայնագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ երեսնօրյա ժամկետում: Սույն համաձայնագրով որևէ Կողմին ներկայացված առարկությունները վերջինիս կողմից ենթակա են պարզաբանման 3 աշխատանքային օրվա ընթացքում:

6.2 Առաջացած վեճերը բանակցությունների միջոցով չլուծվելու դեպքում լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

Հոդված 7. Հատուկ պայմաններ

7.1 Սույն համաձայնագրի լրացումները և փոփոխությունները համարվում են օրինական, եթե վերջիններս գրավոր ձևով կազմված և համատեղ ստորագրված են Կողմերի կողմից:

Հոդված 8. Համաձայնագրի գործողության ժամկետը

8.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

8.2 Բանկի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու պահից Բանկը զրկվում է սույն համաձայնագրով նախատեսված գործարքները կնքելու իրավունքից:

8.3 Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում Կողմերի՝ սույն համաձայնագրով ստանձնած և չկատարած պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ կամ եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվում:

8.4 Սույն համաձայնագիրը կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի գրավոր դիմումի հիման վրա, որը պետք է ներկայացվի համաձայնագրի դադարեցման օրվանից մեկ ամիս առաջ:

8.5 Կողմերը պարտավորվում են եռօրյա ժամկետում գրավոր ձևով միմյանց տեղեկացնել իրավաբանական կամ փոստային հասցեի, վճարային ռեկվիզիտների, տելեքսի, հեռատիպի, հեռախոսի, ֆաքսի, «Սի Բի Էյ նեթ» համակարգչային ցանցի համապատասխան հասցեների և այլ փոփոխությունների մասին, որոնք ապահովում են սույն համաձայնագրով սահմանված դրույթների կատարումը:

Հոդված 9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)

9.1 Սույն համաձայնագրի դրույթները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է հանդիսացել պարտավորությունների կատարման վրա էականորեն ազդող անհաղթահարելի ուժի և ֆորս-մաժոր համարվող պայմանների ազդեցության:

Հոդված 10. Այլ դրույթներ

10.1 Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է 2 օրինակից (յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ): Երկու օրինակն էլ ունեն հավասար իրավաբանական ուժ:

Հոդված 11. Կողմերի իրավաբանական հասցեները

Կենտրոնական բանկ

Հայաստանի Հանրապետություն

375010, ք. Երևան,

Վ. Սարգսյան փ. 6,

Հեռախոս՝ _____

Տելեքս՝ _____

Ֆաքս՝ _____

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

Տ. Սարգսյան _____
Կ.Տ.

Բանկ

Հայաստանի Հանրապետություն

_____

_____

_____

Հեռախոս՝ _____

_____

Տելեքս՝ _____

_____

Ֆաքս՝ _____

_____

_____ բանկի գործադիր տնօրեն (վարչության նախագահ)՝

_____Կ.Տ.

Հավելված 1

ՀԱՅՏ N ------

Արժեթուղթ վաճառելու համար

Ներկայացվում է համաձայն Կենտրոնական բանկի և «----------» բանկի միջև «----» «----------» 200- թվին կնքված ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման N «----------» համաձայնագրի:

Առաջարկում ենք «----------» բանկից գնել Արժեթղթեր հետևյալ պայմաններով.

Արժեթղթի թողարկման համարը	Արժեթղթի մարման ժամկետը	Արժեթղթի անվանական գինը	Արժեթղթի վաճառքի գինը	Տարեկան եկամտաբերությունը
Ընդամենը				

«----------» բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ համաձայն Կենտրոնական բանկի և «----------» բանկի միջև «----» «----------» 200 - թվին կնքված ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման N «-------» համաձայնագրի համապատասխան դրույթների:

«----------» բանկ
Գործադիր տնօրեն (վարչության նախագահ)

Կ.Տ

«------» «----------» «-----»թ.

հավելված 2

ՀԱՅՏ N ------

Արժեթուղթ գնելու համար

Ներկայացվում է համաձայն Կենտրոնական բանկի և «----------» բանկի միջև «----» «----------» 200- թվին կնքված ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման N «-------» համաձայնագրի:

Առաջարկում ենք «----------» բանկին վաճառել Արժեթղթեր հետևյալ պայմաններով.

Արժեթղթի թողարկման համարը	Արժեթղթի մարման ժամկետը	Արժեթղթի անվանական գինը	Արժեթղթի գնման գինը	Տարեկան եկամտաբերությունը
Ընդամենը				

«----------» բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ համաձայն Կենտրոնական բանկի և «----------» բանկի միջև «----» «----------» 200- թվին կնքված ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման N «-------» համաձայնագրի համապատասխան դրույթների:

«----------» բանկ
Գործադիր տնօրեն (վարչության նախագահ)

Կ.Տ

«------» «----------» «-----»թ.

հավելված 3

ՀԱՍՏԱՏՈՒՄ

Արժեթուղթ գնելու համար

Առաքվում է «----------» բանկին համաձայն Կենտրոնական բանկի և «----------» բանկի միջև «----» «----------» 200 - թվին ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման N «-------» համաձայնագրի:

Ձեր կողմից «-----» «----------» «200----» թ. ժամը «-----»-ին Կենտրոնական բանկ ներկայացված N ---- հայտը համարել ակցեպտավորված:

Արժեթղթի թողարկման համարը	Արժեթղթի մարման ժամկետը	Արժեթղթի անվանական գինը	Արժեթղթի առքի գինը	Տարեկան եկամտաբերությունը
Ընդամենը				

Կենտրոնական բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ համաձայն Կենտրոնական բանկի և «----------» բանկի միջև «----» «----------» 200- թվին կնքված ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման N «-------» համաձայնագրի համապատասխան դրույթների:

Կենտրոնական բանկ

Կ.Տ

«------» «----------» «-----»թ.

հավելված 4

ՀԱՍՏԱՏՈՒՄ

Արժեթղթեր վաճառելու համար

Առաքվում է «----------» բանկին համաձայն Կենտրոնական բանկի և «----------» բանկի միջև «----» «----------» 200 - թվին ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման N «-------» համաձայնագրի:

Ձեր կողմից «-----» «----------» «200----» թ. ժամը «-----»-ին Կենտրոնական բանկ ներկայացված N ---- հայտը համարել ակցեպտավորված:

Արժեթղթի թողարկման համարը	Արժեթղթի մարման ժամկետը	Արժեթղթի անվանական գինը	Արժեթղթի վաճառքի գինը	Տարեկան եկամտաբերությունը
Ընդամենը				

Կենտրոնական բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ համաձայն Կենտրոնական բանկի և «----------» բանկի միջև «----» «----------» 200 - թվին կնքված ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման N «--------» համաձայնագրի համապատասխան դրույթների:

Կենտրոնական բանկ

«------» «----------» «-----»թ.

հավելված N 5

ՀԱՅՏԻ ՄԵՐԺՈՒՄ

Առաքվում է «----------» բանկին

Կենտրոնական բանկը համաձայն Կենտրոնական բանկի և «----------» բանկի միջև «----» «--------» 200--- թվին կնքված Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում գործառնությունների իրականացման N «----» համաձայնագրի 3.6 և 3.7 կետերի մերժում է Արժեթղթի առքի / վաճառքի գործարք կնքելու համար «-------» «----------» «----» թ. ժամը «-------»-ին Կենտրոնական բանկ ներկայացված N –------ հայտը:

Կենտրոնական բանկ

Կ.Տ

«------» «----------» 200---